ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը. Ժաննա Անդրեասյան**

2. **Զբաղեցրած պաշտոնը.Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ**

3. **Գործուղման վայրը և ժամկետները. Թբիլիսի, Վրաստան, 13-15.06.2019թ.**

4. **Հրավիրող կողմը. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ**

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/. Գործուղման նպատակը ICPD 25 համաժողովին մասնակցելն էր և հանդես գալը իբրև խոսնակ առաջին քննարկման ժամանակ՝ ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած փոփոխությունները վերջին 25 տարվա կտրվածքով կանանց հզորացման, ընտանիքների և ծնելիության խթանման ոլորտում:*

6. **Քննարկված թեմաները.** Համաժողովի ընթացքում քննարկվեցին ժողովրդագրության, կանանց հզորացման, գենդերային հիմնախնդիրների, տարեցների սոցիալական աջակցության և մի շարք այլ հարցեր: Ներկայացվեց տարբեր երկրների փորձն ու ծառայությունների տարբեր մոդելները, որոնք փորձարկվել են տարածաշրջանի երկրներում, ինչպես Բոսնիա և Հերցեգովինայում տարեցների խնամքի համայնքային կենտրոնների ծրագիրը, Վրաստանի գյուղական վայրերում միջսերնդային համերաշխության հայեցակարգի վրա հիմնված գիտելիքի սրճարանի կոնցեպտը և այլն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Համաժողովի ընթացքում հանդես եկա իբրև խոսնակ կանանց հզորացման, ընտանիքների և ծնելիության խթանման հարցերին նվիրված պանելային քննարկմանը, որն ուղիղ հեռարձակվում էր՝ Վրաստանի խորհրդարանի համապատասխան հարցերով հանձնաժողովի նախագահի, Վիեննայի

հետազոտական ինստիտուտի պրոֆեսորի և CEDAW-ի փոխնախագահի հետ միասին: Վրաստանի գործընկերոջ հետ առանձին քննարկեցի տղամարդկանց ծնողավարման խթանմանը ուղղված ծրագրի և հանրային արշավի մանրամասները՝ հետագայում այս փորձը առավել մանրամասն ուսումնասիրելու և Հայաստանում դրա հնարավոր կիրառելիությունը հասկանալու նպատակով, CEDAW-ի փոխնախագահի հետ քննարկեցի ընտանեկան բռնության երևույթի կանխարգելման փորձը, հատկապես՝ աջակցության կենտրոնների գործունեության առանձնահատկություններն ու առաջացող խնդիրները՝ հաշվի առնելով առաջիկայում նմանատիպ կենտրոնների ստեղծման նախագիծը Հայաստանի համար:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.** Համաժողովը չէր ենթադրում որևէ որոշման ընդունում կամ փաստաթղթի ստորագրում: Այդուհանդերձ, որոշ մասնակիցների հետ ձեռք է բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություն կոնկրետ ծրագրերի շուրջ, ինչպես թվարկվեց նախորդ կետում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տարածաշրջանային տնօրենի տեղակալի հետ՝ առաջիկայում Հայաստան այցելելու և Հայաստանում հետագա ծրագրերի շուրջ պայմանավորվածություններ ձեռք բերելու ուղղությամբ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.** Հաշվի առնելով առաջիկայում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տարածաշրջանային տնօրենի տեղակալի այցը Հայաստան՝ առաջարկվում է ամփոփել և վերջինիս ներկայացնել այն ծրագրերը, որոնց շուրջ միջազգային աջակցության կարիք կա: Ծրագրերը կարող են վերաբերել ժողովրդագրական խնդիրներին՝ ներկայումս մշակվող ժողովրդագրության ռազմավարությանը համահունչ: Նման ծրագրային առաջարկները կամփոփվեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և նախատեսվող հանդիպմանը կբանակցվեն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի հետ՝ հետագա իրականացման նպատակով:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:** 18.06.2019թ.